

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 1272-Ն ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ
ՎՐԱ ԴՐՎԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանվել են իրատեսական գներ: Առողջապահության բյուջեով հատկացվող գումարները շտապ բժշկական օգնության ծառայության կազմակերպման համար ավելացվել են 50 տոկոսով:
2. Համապատասխան հարցումների միջոցով գնահատվել է շտապօգնության ծառայությունից բնակչության բավարարվածության աստիճանը:
3. Իրենց կառուցվածքում շտապօգնության ծառայություն ունեցող բժշկական հաստատություններում տեղադրվել է պետական պատվեր:
4. Ներդրվել են շտապօգնության վճարովի գործունեությունը կարգավորող ընթացակարգեր:
5. Հայեցողական և պետական ծառայության ղեկավար ու քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր խմբի ծառայողների կողմից սահմանված կարգով ու ժամկետներում ներկայացվում են եկամուտների հայտարարագրեր:
6. ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մարմինների 50 տոկոսի գործունեության հաշվետվությունները հրապարակվում են սահմանված կարգով
7. ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների 80 տոկոսի գործունեության հաշվետվությունները հրապարակային են:
8. ՀՀ Տավուշի մարզպետարանի վեբ կայքը ուղղակիորեն կապված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության վեբ կայքին